

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 սարեկան 12 ֆր.
 վեցամսեայ 6 »
 Արսասահմանի
 համար սարեկան 15 »
 վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 սարեկան 3 ֆր.
 վեցամսեայ 1.50 »

Մանուգլան տղր սուս
 ջին երեսին համար 40 ս.
 իսկ վեջին երեսին հա-
 մար 20 սակերով է. երե-
 ֆեկ աւելի անգամներու
 համար 20 0/0 զեղյ կը-
 շայ:

Վառնայի համար
 ձեռք 40 սակերով

ՉԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂՄԲԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԻՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ԿՈՐԵՐԸ

Նուսկի և ցրակ դրկի
 խոր գործընթաց հաս-
 ցին

Редакция на вѣстники
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Char oum“
 (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար
 ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
 ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և սակեր
 տարբեր

ՉԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՇՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎՃՅՐԵ

ՓԵՏԵՐԱՅԻԱ

Մակեդոնա Հայկական ամսագիր

Այսօր ընդունեցինք այս անունով
 բուլղարերէն ամսագրի առաջին յուն-
 վարի թիւը. որի մասին արդէն նա-
 խորք տարւան վերջերում յայտարար-
 ված էր Շարժումի մէջ: Շատ ուրախ
 լինելով որ մեր մակեդոնացի կամ
 բուլղարացի բուլղար բարեկամները
 այնքան մտախի են զգում իրենց սրտին
 հայ ժողովուրդին, որ յատկապէս եր-
 կու զժողովուրդը ժողովուրդների դասը
 պաշտպանելու համար ամսագրի են
 հրատարակում, աւելորդ չենք համա-
 րում մեր բարեկամների հրատարակած
 ամսագրի նպատակը պարզող առա-
 ջին յօդուածէ խարզմանութիւնը սալ
 մեր ընթերցողներին:

ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Մեր թափանցիկ նայուածք ենք
 նետում կրթիչ անցեալի մէջ, թեր-
 թում ենք պատմութիւնը, մանրա-
 մասնութեամբ դիտում ենք անցքերը
 եզրակացութիւնը տխրութիւնով է
 լեցնում մեր սիրտը և սարսափելի մըտ
 թի գիտակցութիւնը մեզ տիրապե-
 տում: Բազմաթիւ զոհերով և տան-
 ջանքով շինված ըստ երեւոյթին մի
 հսկայական շինութեան հիմքում մենք
 նկատում ենք նրա գոյութեան
 սպառնացող վտանգը և տեսնում որ
 նա պէտք է խորապիկի սարսափելի
 կերպով, որին պէտք է հետեւի ժո-
 ղովրդային կործանումը:

Բալկանեան թերակղզու բնակիչնե-
 րի մէջ լեզուների մի բոլորնեան
 խառնակութիւն է տիրում, անհաս-
 կացողութիւն շահերի և տեսնվում մի
 շարժում անբնական ճանապարհներով:
 Մի կեղծ քաղաքական վեփեռո,
 լինի նա հիւսիսային կամ արեւմու-
 եան այդ ժողովուրդներին ստիպում է
 իրար անցնել և ի հաշիւ օտար բող-
 ճանքների շատ վատ սուտել:

Ժողովուրդները կախվել են մի
 արտակարգ և սարսափելի բխու-
 թեամբ անգունդի վրա և իրենց
 թշնամիների քմահաճոյքների համար
 պատրաստ են նետվել նրա մէջ, որից
 դուրս գալու համար շատ աշխատանք
 և եռանդ է պահանջվում:

Ուր է փրկութիւնը, ելքը այդ
 սպառնական կացութիւնից, հարցը-
 նում են խաղաղութեան բարեկամները:
 Պատասխանը շատ կարճ է. այդ ժո-
 ղովրդների մի զանազանութեան մէջ
 ձուլվել, որը նրանց կը միացնէ,
 կուտեղծէ և նրանք միասին կը կա-

րողանան առաջ գնալ իրենց քաղա-
 քակրիական և յառաջդիմական ճամ-
 բու մէջ, և կարելիութիւն կուենան
 հասնել այն ժայռի վրա, որից
 պէտք է կարողանան ուղղութիւն եւ
 տօն տալ իրենց ճակատագիրը վարե-
 լու գործին:

Այս նպատակին հասնելու զէմ կան
 արգելքներ, որոնց արմատախիլ ա-
 նելը ստիպողական է:

Մէկ զժբախտ երկիր, ընկճված
 ամառի և խիստ բռնութեան հըս-
 կայական ծանրութեան տակ, փո-
 խանակ եղբայրացիներու բախտակից
 ժողովուրդներին, ընդհակառակը, ար-
 տայտվեք այսպէս, բաժանուների
 հիմք է ծառայում:

Անհամաձայնութիւնը պատճառ է
 ժողովրդային շատ զժբախտութիւն-
 ների: Այդ պատճառով Բալկանեան
 թերակղզին աւար միաց օսմանցի-
 ների ձեռքում եւ նրա յառաջողութե-
 թիւնը տանեակ սարկներով ետ մը-
 նաց:

Մենք մեզ նպատակ ենք դրել
 պարզելու բալկանեան փոքրիկ պե-
 տութիւնների միջեւ եղած անհամա-
 ձայնութիւնների պատճառները եւ
 ցոյց տալու միջոցները, որոնցով
 կարելի է հարթել այդ անհամաձայ-
 նութիւնները, որպէսզի դանակացու-
 թեան գաղափարը իրականանայ:
 Միւս կողմից էլ մենք պիտի պաշտ-
 պանենք մակեդոնացի և հայ յեղա-
 փոխականների միանալու խնդիրը,
 որոնց երկուսն էլ կուտում են միեւ-
 նոյն թշնամու դէմ:

ՎՏԱՆԳ ԹԵ ԾՆԱԲԹ

Եթէ կուզենք լաւ հասկնալ պա-
 տասխանը զոր Պուշկարիոյ կըր-
 թական նախարարութիւնը տաւ
 է պատրիարքարանին՝ պէտք է
 նախապէս պարզենք փիլիպպեցի-
 ներուն գիմուճը իր բոլոր խկու-
 թեամբը և գրգռապատճառներով
 միասին:

Այդ գիմուճը որ իր բնոյթով
 շատ փափուկ էր և կրնար ամ-
 բող պուլկարահայութեան հա-
 մար անախորժ լուրջ հետեւանք-
 ներ ունենալ՝ պատասպարտելի
 հապճեպով մը եղած է: Փիլիպպի
 թաղականութիւնը պարտ էր
 վերջին աստիճան շրջահայեցու-

թեամբ գործել, շատ մը ձեռն-
 հասնելու կարծիքը շոշափել և
 մանաւանդ խորհրդակցիլ տեղա-
 կան հանգամանքներու ծանօթ
 ուսուցիչներու հետ: Բայց ո՞վ
 պիտի միտք բերէր ուսուցիչները
 ասանկ պարագայի մը մէջ երբ
 զուտ կրթական և մանկավարժա-
 կան հարցերու մէջ անգամ ա-
 նոնց փորձառութիւնը և համո-
 զումը յարգող չը կայ:

Դիմումը վարագոյրի ետեւէն
 ստեղծող և յառաջ մղող անտես
 ազգակը եղած է կրօն Միքայել
 եան և ընկերութիւն: Այդ տըխ-
 րահոշակ պարոնը այս տարի
 զպրոց մտաւ սա ցաւազին նա-
 խաղաղու թեամբ թէ այլեւս իր
 գիրքը անդաժմանելի կերպով
 խախտած է: Առանց վկայականի,
 առանց վստահելի նկարագրի և
 էնթրիկներու շնորհիւ միայն
 կոչուիլ պաշտօնի մը որ պէտք
 ունէր տարուէ տարի կրթական
 նախարարութեան վաւերացու-
 լու իրեն աննպատ օրէնքի մը
 ժամանակաւոր զանցառութեամբը
 միայն լինէր զժուար կացութիւն:
 Բայց աւելին կար, ինչեւալ տար-
 ւան վարժարանական խնդիրնե-
 րուն մէջ հոգաբարձութիւնը ար-
 համարհելով նախարարութեան
 հրամանները՝ պատճառ եղած էր
 զպրոցին բուն փակումին ու հա-
 զիւ հաղ կարողացած էր վերա-
 բացումի արտօնութիւն ստանալ:

Վշտացած նախարարը այսու-
 հետեւ աւելի խիստ չպիտի վար
 ուէր կրօնին հետ: Ինչ պէտք
 էր ընել որ գալիք վտանգը կամ
 բողբոլին վերնար կամ գէթ ու-
 շանար: Ըստ տուճկամիտ Միքայ-
 էլեանի՝ առոր ամենալաւ միջոցն
 էր փիլիպպի մասնաւոր պարա-
 գան ընդհանրացնել ամբողջ
 պուլկարահայութեան վրայ և այդ
 պուլկարահայութեան անունով
 դիմել պատրիարքարանին: Ասով
 դիմումը շատ աւելի ծանր կեր-
 պարանք կառնէր և պատրիար-
 քարանը դող ելած՝ իր բոլոր ազ-
 գեցութիւնը ի գործ պիտի դնէր:
 Ասիկա ոչ միայն քնացող և
 կամ բարեմտօրէն քնանալ ձե-

ւացնող սուրճը արթնցնելու
 տխմար փորձ մըն էր՝ այլ նաև
 բացորոշ կերպով ցոյց կուտար
 թէ ուրիշ հայաբնակ քաղաքնե-
 րու ազգ. մարմիններու նման՝
 փիլիպպի թաղականութիւնն ոչ
 զեռ չէ ըմբռնած իր պատասխա-
 նատուութիւնը երկրին հաստա-
 տուած օրէնքին առջեւ: Որքա՞ն
 հակաքաղաքացիական և անբա-
 բոյացուցիչ բան էր՝ օտարահը-
 պատակ իշխանութեան մը միջո-
 ցաւ խնդրել նախարարութեան
 մը որ յմահածօրէն և ակնյայտ-
 նի խաղալ իրեն յանձնուած օ-
 րէնքներուն հետ: Եթէ այսօր
 մեզի աննպատ գատուած օրէն-
 քի մը գործադրումը արգիլելու
 համար նախարարութեան կր դի-
 մենք՝ վաղը ո՞ր պիտի դիմենք
 երբ նոյն նախարարութիւնը մե-
 զի օգտակար օրէնք մը եղծելու
 ենէ: Բայց ո՞վ կրնար պահան-
 ջել փիլիպպի թաղականութեան
 որ երջանիկ բացառութիւն մը
 կազմէր իր տեսակին մէջ՝ երբ
 մեր ամբողջ պուլկարահայու-
 թիւնը ուսուցիչներով հանդերձ՝
 գեռ չէ կրցած արմատախիլ ընել
 իրենց մէջէն տաճկական բժի-
 մին իրենց կտակած հակաքա-
 ղաքակրթական ըմբռնումները:

Սակայն ինչպէս պատրիարքին
 փիլիպպեցիներուն ուղղած գրու-
 թեան կերեւի՝ խնդիրը իր ելու-
 ծէն շատ աւելի գէշ ներկայաց-
 ուած է փիլիպպի թաղականու-
 թեան կողմէ: Ոխալ է թէ բոլոր
 ուսուցիչներէն կր պահանջուի
 կիմնազիտ ըլլալ: Հիմակ ու հի-
 մա նախարարութիւնը կը ծան-
 րանայ միայն սա կէտին վրայ որ
 բոլոր ուսուցիչները պուլկարա-
 հպատակ ըլլան: Արդէն ասկէ
 անդին անցնելու պէտք չունի:
 Աւելորդ չը պիտի ըլլայ այս մա-
 սին յիշել սա իրողութիւնը թէ՞
 մինչ քաղաքիս կրթական սե-
 սուշը առանց առարկութեան կը
 վաւերացնէր ազգ. վարժարանին
 մէջ ոչ կիմնազիտ մէկ ուսուցչու-
 հին հարկ կրլլայ դիմել նախա-
 րարութեան՝ միւս բոլոր ուսու-
 ցիչներուն վաւերացումին հա-

մար, ձեռակերպութիւն մը որ առանց դժուարութեան անցաւ:

Ստորագ է թէ ֆիլիպէի հոգաբարձութիւնը այս տարեշրջանի սկիզբը բաղխեցաւ խոչնդոտներու իր ներկայացուցած ուցիչներու վաւերացման մէջ. բայց ինչո՞ւ. որովհետեւ անցեալ տարուան միջոգէպերուն յիշատակը դեռ թաքմ էր նախարարութեան խորհրդի մէջ և հոգաբարձութիւնը կը ներկայացնէր ուսուցչական խումբ մը որոնցմէ շատերը դպրոցական վկայական մը իսկ չունէին՝ մինչդեռ անգիրն երեք չորս կիսմագիտաներ ի զուրպաշտօն կը խնդրէին ազգ. դպրոցին մէջ:

Ահա խնդիրը իր ամբողջ էութեամբը, ինչպէս որ արդէն ցոյց տուինք՝ դպրոցական օրէնքը իր ամբողջութեամբը գործադրելու նոր շարժում մը կամ նպատակ մը չը կայ նախարարութեան մէջ: Միլիպէցիները ստեղծեցին վախը զոր Պատրիարքարանին փոխանցեցին և որ իր կարգին վարակեց ամբողջ Պուլկարահայութիւնը:

Եթէ նախարարութիւնը մեզի աննպատակ պատասխան մը ըրաւ՝ այդ անհրաժեշտ հարկ մըն էր զոր իր պաշտօնը և դիրքը իր վրայ կը դնէր: Ինչպէ՞ս կրնար պատասխանել երբ իր դիտումնաւոր կերպով անգիտացած օրէնքը իրեն կը յիշեցնէին և զինք պարտազանցութեան կասկածի ստուերի մը մէջ կը դնէին: Որչա՞փ մեծ պատասխանատուութեան տակ պիտի իյնար եթէ պաշտօնապէս յայտարարէր թէ

չը պիտի գործադրէ. իր ըսածին նայելով օրէնքին ոչ մէկ գործադրումը շնորհ մըն է, բայց շնորհ մը որուն պատճառները արդէն տեսնուի: Հոս աւելցնենք նաեւ թէ նախ. Շիշմանօֆ՝ վերջերս յունական կիսմագիտալի մը մէջ՝ ատենախօսելով ըսած է թէ ամէնքս եղբայր ենք և պէտք է որ յոյն և պուլկար կիսմագիտաները համահասարակ ընդունուին: Սա շատ մեծ պիջողութիւն մըն է և մեր պարագային համար՝ մասնաւորապէս նշանակալից:

Ո՛չ, վտանգը դրսէն չըսպանար մեր դպրոցներու այլ ներսէն: Զանոնք քանդողը պուլկար ձեռնմխութիւնները չպիտի ըլլան՝ այլ պարզապէս մեր անփութութիւնը. մեր ազգիտութիւնը, մեր կոյր կուսակցականութիւնը, մեր անկազմակերպ վիճակը, մեր հիւանդագիրն անհատականութիւնը: Ինչո՞ւ չենք յարգում մինչև հիմա ներքին կանոնագիր մը ընդունուած և տարուէ տարի գործադրուած ծրագիր սը. և մանաւանդ հաստատ ուսուցչական մարմին մը ունենալ: Երբ Պուլկարի մէջ ուսուցչութիւնը միշտ անարգուած, աննպատակ և խղճօրէն վարձատրուած ասպարէզ մը կը մնայ՝ ո՞ր կարող և կորուզի երիտասարդը կրնայ զայն սիրով ընդգրկել. անոր մէջ զարգանալ և օրէնքին սմեմակարեւոր մասը գահացնելու համար պուլկարահայատականութիւն ընդունիլ:

Ս. ՊԱՉԱՐՕՎ

22 մարտ 1905
Վառնա

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Արտասահմանում հրատարակվող ուսուցչական ամսագրից)

1901 թւին Վրաստանը տօնեց իր Ռուսիային կցվելու հարիւրամեակը: Եամպանիան շրբ պէս էր խմվում, հեռագիրը շարունակ շնորհաւորութիւններ էր բերում թիֆլիզի փոքրօրով կտուքերը փոթորկի պէս էին սլանում, իրենց մէջ կրելով փայլուն գեներալներ եւ ուրիշ բարձրաստիճան անձեր:

Վրացի ազնուականութիւնը իր ըստրկական հնազանդութիւնը եւ ամենահաւատարիմ զգացումները զէպի կայսերական գահը արտայայտելու համար այնքան առաջ գնաց, որ ցարից ընդունեց արժանի վարձատրութիւնը:

Թիֆլիզի այդ գործը խղճալի էր, որը յորելեան բարձրագոյնը անունն էր կրում, որը շատ գեղեցիկ կերպով ցոյց տուին գեներալները եւ պետերի ճանքը, որոնք զովաբանում էին Վրաստանը Ռուսիային կցելու քաղաքակրթական մեծ նշանակութիւնը: Այդ քայլը ցոյց տուց թէ որչափ խղճօրէն, ոչ քաղաքակրթական կերպով է կառավարվում բերրի եւ հարուստ Վրաստանը եւ ամբողջ կովկասը 100 տարվան ընթացքում:

Եզրովորդը շատ ցուրտ, նոյնիսկ հեգնութեամբ վերաբերվեց զէպի բարձրաստիճան մարզկանց այդ բորբոքումը: Թիֆլիզի կիևսօն, յայտնի իր առողջ հեգնութեամբ, իսկոյն ըմբռնեց այդ բոլոր դրդումները, հանդէսների եւ ճանքի ծաղիկիութիւնը եւ Փայտոնների ետեւերից կապեց շքազարդ թիֆլիզներ, հասկացնելով որ այդ ճանքին էլ այնքան դատարկ են որչափ թիֆլիզի ամանները:

Ոստիկանութիւնը հասկացաւ, իհարկէ եւ առիթը չը փախցրեց այդ ընդունել իբր քաղաքական յանցանք

եւ փողոցներում արգիլել թիֆլիզի բարձր արտասանել:

Այդպէսով ոչ միայն գիտակից բանւոր գաւազարգը այլեւ արհեստաւորները, փոքրիկ խանութպանները, որոնք թիֆլիզում ընդհանուր խօսքով կիևսօն են կոչվում, ցոյց տուին որ իրենք ոչինչ ընդհանուր չունեն տօնող բուրժուազիաի եւ ազնուականների հետ, իրենց զգացումները ցուցադրելով:

Այդ հաստատուն գրուական է որ կովկասը արթնանում է. որ անցանային ժամանակները երբ ժողովուրդը իրապէս ցարին ներկայացնէր եւ անկեղծ հրճանքով դիմաւորում էր թագակրներին: Այժմ կիևսօն այդ անձերի համար ունի միայն ծաղր եւ կծու սուլոց:

Բայց եւ ուսուցչականութիւնը չը կարողացաւ թագցնել իր իրական նպատակները, յամենայն դէպս ոչ քաղաքակրթական նպատակը հանդէպ կովկասի, մերձեցնելով թիֆլիզի լատենների մտադրութիւնը, որ կայանում էր հարիւրամեակը յաւերժացնելու համար բարձրագոյն ճարտարաբանական դպրոց բաց անելու: Այդ խնդիրը 6-7 տարի է որ գոյութիւն ունի եւ ամէն անգամ մերժվում է այն պատրասկով որ այդ դպրոցը հայելի ձեռքում պէտք է լինի:

Այսուհետեւ ո՞վ կը հաւատայ այն խոսքերին, որոնք տեղաւորված են կցման առիթը եղած հրովարտակի մէջ՝ եւ փոքրոված սփռած տաճարում որ կովկասի միացման յուշարձանն է. — ոչ չհանդիմանական նպատակով, ոչ սահմանները լայնցնելու այլ Վրաստանի բարորութեան համարէ միացվում Ռուսաստանին, կառավարութիւնը այլեւս չէ թագցնում, որ այդ խօսքերը սուտ են, որ ինչպէս Ռուսաստանում, այնպէս եւ կովկասում, կառավարութիւնը ամենինք քիչ է հոգում ժողովրդի եւ երկրի բարորութեան մասին: Գերի

Ա. ԱՄՅԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՐՈՐԱ ՊԵՎԼՕՎԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագիտի յիշողութիւններից. Ամրան արկածներ քաւական սուրօրինակ հասարակութեան միջ)

(Թարգմ. ուսուցչէնից)

18

Ե.

(Շար. նախորդ քիւն)

Զվերինցերը իրաւունք ունէր. երբ ինձ սկզբում խոստովանում էր թէ Վիկտորիա Պավլովայից շուտով չէի կարող հեռանալ Երկրորդ շաբաթն էր որ հիւր էի Պրովօսլայում, եւ ինձ շատ լաւ էի գգում: Մարդուն անհրաժեշտ է որ կեանքում երբեմն այն պիտի դէպքեր լինեն որ ամբողջ կեանքը տակն ու վրա անեն: Բոլոր յարմարութիւններով երես առածին լաւ է ընկնել մի վանք որ չոր հացով են կերակրում, ու մի շաբաթ հիւրասիրվելուց յետոյ հագցնում են արեղայական կապան եւ ստիպում աչ-

խատանքի սկսել, ուր անկատարի կերպով սեղի ունեցած երկարատեւ քայլերուց յետոյ, վայրենի եւ գեղեցիկ բնութեան մէջ մարդ այնքան լաւ է ընում չոր եւ բարակ գոշակներով ծածկված տախտակների վրա. ուր զանգակները մոնթելին գիշերը եւ առաւօտեան շուտ երեք անգամ արթնացնում են ասելով. գնա՛ եկե զեցի:

Հասարակութիւնից նեղված, շատ հաճելի է գտնվել այնպիսի մի քաղաքում ուր ոչ մի կենդանի հոգի չէ չէ ճանաչում եւ ամենաչնչին ուշադրութիւն իսկ չէ դարձնում վրադ: Վարժված հոգածու խնամողութեան մեծ հաճոյքով վերափոխվում ես ինքնօգնութեան կացութեան, անհատական ազատութեան մէջ:

Իսկ Պրովօսլայում կեանքը անկախութեամբ հարուստ էր: Օրեր էին պատահում որ ես տանտիրուհուն երբէք չէի տեսնում. պատահում էր որ ես էլ ամբողջ օրերով անհետանում էի շրջակայ գիւղերում, թափառելով. եւ վերադարձիս տանտիրուհին ինձ ոչ ինչ չէր հարցնում եւ չէր արտասանում նեղացուցիչ սովորական խօսքերը. իսկ մենք արդէն սկսել էինք անհանգստանալ ձեր մասին:

Ես առհասարակ ամառում եմ որ Վիկտորիա Պավլովային բոլորովին չէր էլ նկատում իմ բացակայութիւնը:

Թէեւ ինձ դիմաւորում էր մեծ ուրախութեամբ, Շրջականերում իրենց կարած քնքերում ապրող ազնուականները չը կային: Կալածները կառավարիչները կիսագրագէտ լատիշներ էին եւ Վիկտորիայի մասին նրանցից տեղեկութիւններ հարցնել չարժէր. բայց ես ցանկանում էի դրացիների սովաւորութիւնները Վիկտորիայի մասին հասկանալ: Գիւղացիները գովում էին.

— Բարեսիրտ տիրուհի է, Բայց մեծ համակրանք չունէին զէպի նա:

— Տարօրինակ է, ասում էր մեղուաբան Ալեքէյը, ճանճանոցում, որ երեք վերստ հեռու էր գտնվում Պրովօսլայից. շատ խնթութիւններ ունի. օրիորդ է, բայց գիւղացու պէս է ապրում, կարծեմ ազնուականների մէջ այդպէս չէ:

— Էհ, քո կարծիքով այդ վատ է: — Մեր գործը չէ, պարոն, դուք կրթված էք, աւելի լաւ կը հասկանաք:

— Այնու ամենայնիւ:

— Մենք նրանից մի գէշ բան չենք տեսել: Բարի է. հողի հետ գործ չունի. նա հողը բարձրացնելու ուժ չունի. այնպէս որ մենք գիւղացիներս վարձում ենք... Վարձով էլ մեզ չէ վշտացնում. Յարմար վարձ ենք վճարում:

— Իրեն հետ է՞ք համաձայնվել: — Որ տեղից. մենք նրան տեսել ենք միայն պայմանները ստորագրելիս: Արիւնայի հետ ենք գործը վերջացրել: Արիւնան՝ օրիորդի մօտ նախագահ է:

— Իրօք նախագահ:

Լաւ գննելով Պրովօսլայի կեանքը եւ համոզվեցի որ այդ կիկը այստեղի կեանքի, գոնէ արտաքին, զսպանակն է: Նրա յարաբերութիւնները իր տիրուհու հետ տարօրինակ էին:

Նա ծառայ չէր: Առհասարակ երբէք չը տեսայ որ Վիկտորիայի տանը թէ ինքը եւ թէ հիւրերը ծառային ու եւ օգնութեան համար կանչէին. իսկ Արիւնային երբէք: Ամէնքն էլ սրա հետ «Դուք ուղի էին խօսում, բացի Վիկտորիայից եւ նրա հետ իրրեւ հաւասարի հետ վարվում: Վիկտորիան էր միայն «ղու» ասում. Արիւնան էլ փոխադարձաբար հին ծծմոր իրաւունքով օգտուվելով:

— Ես նրա գրկում եմ մեծացել. ասում էր Վիկտորիան:

Բայց Արիւնան բարեկամուհի էլ չէր, եռանդոտ ինքնամոռաց եւ իրրեւ աւելի ստորին աւտիճանի վրա գտնուող պատրաստ իր գլուխը տալու իրրենից բարձրերի համար: Այն ջերմութիւնը, բնազդական ազգայնորութիւնը որոնցով աչքի են ընկնում ձրք:

կովկասի զգուշացումը չըջա-
պատված թնդանթնորով եւ պատե-
րազմական ամէն տեսակ խորհրդա-
նիշներով պէտք է ոչնչանան արթ-
նացած եւ դաշնակցական ու ազատ
Ռուսաստանում...

Շարունակելի

ՌՈՒՍՈՒՅՑ ԿՈՅՈՒԹԻՒՆԸ

Ներքին կայսրութիւնը իր խաղա-
ղութիւնը գտնելու նշաններ բոլորու-
վին չի ցուցներ. Վրաստանի մէկ
մասը ամբողջովին ապստամբութեան
վիճակի մէջ կը գտնուի, ներքին
նահանգներուն մէջ, գիւղացիները
հարուստներուն կալուածները կաւե-
րեն եւ պահեստի հացահատիկները կը
թափեն, զանազան քաղաքներու
մէջ տերօրական գործողութիւնները
կը շարունակուին միշտ գոհեր խլի-
լով թէ պաշտօնեաներէն եւ թէ յեղափո-
խականներէն. այս բարեկամական
խառնակութեան մէջ մէկ հոգմէն լու-
րեր կը հասնին թէ ցարի Կառավարու-
թիւնը եւ ինքը որոշած են հաշտու-
թիւն կնքել, որովհետեւ երկրի այս
հրապորտը, մեծ հիւսիս ծնելու արա-
մազի բնակիչներուն մէջ անկարելի է մեծ
քանակութեամբ երկրէն զիւրուր զԵՐ-
կել Ծ. Արեւելք, մեծ կոչմէն ալ կը
պնդեն որ պատերազմի շարունակու-
մը որոշուած է անդառնալիորէն:

Զեմակի սօբորի ժողովի լուրերը
շարունակ մէջտեղ կուգան, բայց դեռ
որոշուած չէ թէ երբ պիտի ըլլայ ան:
Բացի այդ մտքեր խաղաղեցնող լու-
րէն ուրիշ նշաններէ ալ կերելի որ
ցարը որոշած է իր կառավարութեան
քիչ մը ազատական հոգի եւ գոյն
տալ:

Մարտ 20ին թեթերսպորտի կը
հաղորդեն պաշտօնապէս որ ցարի հը-
րամանի համաձայն, նախարարական
ժողովը, վճռած է Սիպերիայէն վե-
րադարձել 62 աղանդաւորներ, որոնք
աքսորված էին զինուորութիւն ընե-

լը մերժելուն համար:
Կրօնական յանցանքներու համար
աքսորուած 382 հոգիի ներուած է,
ինչպէս եւ 142 լիւսացիներու, որոնք
ներքին նահանգները աքսորուած էին:
Այսուհետեւ գաւառային իշխա-
նութիւնները չի պիտի կարենան ոչ
մի արգելք դնել կրօնական ու եւ է
ձէն կատարելու ազատութեան, եւ
վերադառնալու իրաւունք պիտի տան
անոնց, որոնք օստիկանութեան կար-
գադրութեամբ աքսորուած են:

Կայսրը ներած է 278 օտարապու-
րներու որոնք 1897ին գաղապարուած
էին:
Արգարտաբանութեան նախարարը
միջոցներ ձեռք առած է ամենայն
արագութեամբ ուսումնասիրել անց-
եալի մէջ կատարուած բոլոր կրօնա-
կան յանցանքները ուրիշ գաղապար-
տուածներուն ալ ներելու գիտումով:

ԿՐԵՏԷՆ ԿՐԿԻՆ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Ապստամբութեան օրրան, Կրե-
տէ կղզին կրկին ըմբոստացած է.
այս անգամ ոչ թէ լուրջ կառա-
վարութեան դէմ այլ իր իշխանին,
սահմանադրութեան եւ հովանա-
ւորող պետութեանց դէմ: Այսու-
ամբանքը լեռները քաշուած են
մէկ քանի տեղ. հովանաւորող
պետութիւնները կուզեն կօշք բե-
րել եւ ճնշել ու այդ առիթիւ իշ-
խան Եսրկի նախապէս պետու-
թեանց խնդրելով որ դեռ այդ
քայլը չընեն, կոչով մը ապս-
տամբները կը հրաւիրէ զէնքերը
վար դնել:

Շարժման գլխաւոր պատճառ-
ներէն մին է Կրետէն Սուրաւա-
նի հետ միացնելու բաղձանքը.
որի առթիւ Վրէնայի քիւրիթ.

Քորէսը. թերթը հեռուալը կը
գրէ:

«Վեղուց ի վեր կրետէի մէջ
բացի կառավարական եւ ընդգի-
մագիր կուսակցութիւնէն, կաղ-
մակերպուած է երրորդ «անկախ»
կոչուած կուսակցութիւնը, որուն
ժրագիրն է բնտրողական ձեւի
փոփոխութիւն, որպէս զի փոք
րամասնութեան ներկայացուցչու-
թիւնը ապահովուած ըլլայ: Բնակ-
չութեան տանուածէրնեքու եւ քա-
ղաքայեցիներու ընտրութիւնը. ինչ-
պէս եւ անոնց պաշտօնակատար
ներուն եւ խորհրդակաշններուն:
Զննում աւելորդ պաշտօններու
եւ նուազում մեծ թօշակներու.
բարձում ծխախոտի տուրքի եւ
խնայողութիւն պետական տնտե-
սութեան մէջ: փոփոխութիւն
զինելու յետադիմական օրէնքի
եւ ոչնչացում մամուլի հակասահ-
մանադրական օրէնքին եւ բարե-
նորոգում արգարագապետութեան:
Զանքեր Կրետէի սահմանա-
դրութիւնը նմանեցնելու յունա-
կանին միանալու համակրութիւ-
նը զօրեղացնելու համար:

ՓՈՒԹԱՅԻՔ ՕԳՏՈՒՄԻ ՈՒ ՕԳՆԵԼ

Համալսարանի գիտական ու գրական
հանգէսի երկու հատորները (որոնցմէ
միայն 50 օրինակներ մնացած են),
փոխանակ իրենց իրական արժէքովը
22 ֆրանքի ծախուելու, «կը ծախ-
ուին 15 ֆրանքի» միայն:
Աւելորդ է խօսիլ անոր բովանդա-
կութեան շահեկանութեան մասին.
որուն վրայ արդէն հայ մամուլի լա-
ւագոյն ներկայացուցիչները ժամա-
նակին շոյալած են գնահատանքի ա-
մենէն փայտաշինները:

չէք սիրում:

- Ես նրան չեմ սիրում. Աստուած ձեզ հետ. ինչի չը սիրեմ. բայց ձի ծաղիկի է որ մարդը քոլորովին նկարագիր չունի:
- Աւելի լաւ է որ գուք Արինա օրիորդին համոզելք որ նրա հետ ամուսնանայ. Արինան արհամարանքով չըթուենքերը ծածուց եւ առարկեց.
- Այդպիսի լայն փէշերաւորի հետ ամուսնանայ:
- Բայց օրիորդի ամուսնանալու ժամանակը հաւել է:
- Եւ ի զուրէ. ապրում ենք եւ տիրջը գովարանում. Ամուսնութիւնը ուրախութիւն է ինչ է. Տգամարդիկ հարբեցողներ են:
- Ամենքն էլ հարբեցողներ չեն. Արինա Ծեօղօրօջնա.
- Ամենքն էլ. միայն կան եւ գաղաւթները. գրպանում սրուակ պահողներ կան. ճաշի կամ նախաճաշի վրա ձեւանում են ոչինչ չը խմող. իսկ յետոյ մենակ մնացած միջոցներում, զոցվում են իրենց ստանձնանքներէն կուսկում եւ իրենց անհարկ տեղ եւ գրպանի սրուակից ձուում: Գիտեմ. ես էլ ամուսնացել եմ. Գաշաձա ես գիտեմ:
- Այդպէսով գուք Արինա Ծեօղօրօջնա օրիորդիդ հետ միասին մարդկային ցեղը ոչնչացնելու էք ձգտում: Նա խորամանկութեամբ ժպտաց եւ

Բացի այն որ Համալսարանի երկու
հատորները իրենց անթաւառ ու հրա
հանգիչ պարունակութեամբը պիտի
ըլլան միշտ ինքնազգագացումով գրա-
ղողներու համայնագիտարանը. այլև
լաւագոյն անկիւնը պիտի գրաւեն
միշտ փնտառուած եւ հետաքրքիր գիր-
քերու մէջ, որոնք պիտի գարդարեն
անհատական թէ հասարակական գրա-
դարանները. մնալով ցարդ ամենէն
փայլուն նմուշը «Հայ լրագրութեան»

Համալսարանի գինը տկարացնելով
մեր նպատակն է առաջին շուտով տա-
րածել անոր մնացած հատորները հայ
ժողովրդին մէջ, որպէս զի իրենց հրա-
հանգիչ նպատակին ծառայեն. երկ-
րորդ գեղեցիկ առիթ մը բնծայել.
զայն գնել փութացող ուսումնասէր-
ներուն. առանց ու է զոհողութեան,
կարենալ օգնելու Մուշի կարօտեալ-
ներուն, որովհետեւ զուտ հասոյթին
մէկ երրորդ մասը պիտի յատկացուի
այդ վերջիններուն. Գնողներու ա-
նունները կամ ծածկանունները, ինչ-
պէս որ իրենք փափաքեն, հրատա-
րակուելու են «Հայրենիք» նոյն նը-
պատակով բացած հանգանակութեան
ցանկին մէջ:

Սեմն տեղի համար երկու հատոր-
ները թղթակագ 15 ֆրանք. կարելի
է դիմել Շարժումի խմբագրութեան
կամ ուղղակի

Պաշտասարեան 19 ռիւ Վօֆիլին
Բարիկ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՅԻԿ ԽՈՐԻ ՆՊԱՏԱԿԸ
է երաժշտութիւնով եւ թատրոնով
վառ պահել ազգայնական ոգին հայ
ժողովրդի մէջ: Այս պատճառով խուճա-
րը ամեն ժամանակ պիտի աշխատի
ներկայացումներ տալ զանազան բա-
րենպատակ հաստատութիւններու:
Խմբի նիւթակաւը անձուկ ըլլալուն.
որոշած է ստժամապէս իր տուած ներ-
կայացումներէն 0/6ին 20ը իր պէտ-

շարունակեց:

- Ինչ օչնչացում. որ աղջիկները եւ որբեայրի կիները խնկի պէս ամուսնութեան չեն վազի, մարդկային ցեղը կը ոչնչանայ:
- Հապա ինչպէս.
- Նա կատակով էր ուզում ազատել.
- Մենք կիներս խորամանկ ենք:
- Գործը կարգին կը դրի:
- Պրովօլայի խաղաղ եւ առողջարար ազատութեան մէջ ես մի մեծ գործ էի սկսել գրել եւ չէի ուզում հեռանալ մինչեւ գոնէ ընդհանուր գծերով վերջացնելու երբ կիտօրիայի տօնային հիւրերը հեռացան, չորս հոգի մնացինք. ես Բուրուներ, ուսանող Այսմէտովը եւ ինչ որ Աֆանասի իվանովիչ մի տարեց մարդ. կարճաբերթ, բայց պիտային տիպ, տազ գլխով քրքրուած զգեստներով, Խոստովանում եմ որ այդ մարդին ես նոր նկատեցի:
- Ո՞վ է սա, հարցրի Վիկտորիային:
- Դժբաղդ... անտարբերութեամբ պատասխանեց նա. ճարտարապետ է եղել, ինչ, Հիմա ինքներդ էք տեսնում, իվան Աֆանասիի, որը Մարմնլատովի նման գնալու տեղ չունի:
- Մականուր ինչ է:
- Առանց մականուրի է:
- Իսկ Արինան նրա մասին կարծօրէն այտայայտում էր:
- Անպիտանի մէկը:

(Շարունակելի)

մայրների եւ իրենց սաների երկա-
րատեւ բարեկամութիւնը բոլորովին
չէր նկատվում այս երկուսի միջեւ:
Սրանք երկու համաձայն եւ զուգն-
թացաբար ապրող նկարագիրներ է-
ին եւ շատ կասկածելի էր որ ցան-
կային ի մի ձուլվել ստեղծել զգա-
յուն կիսատարկութիւն, կիսարձու-
թիւն, որոնց փոխադարձութիւնը
մարդկանց մէջ կոչվում է բարեկա-
մութիւն եւ որոշվում ամէկ հոգի եր-
կու մարմնում, մտքով:
— Մի սեգամ Վիկտորիան ծիծաղե-
լով ինձ ասեց. — Մենք մի օր ձեզ հետ
խօսեցինք փեմիլիանի մասին. զուք
պնդում էիք թէ այդ շարժումը ար-
հեստական է, զրախց եկած եւ նմա-
նողութիւն: Խօսեցէք իմ Արինայի
հետ. նրանից էլ խիստ զեղջկուհի
չըկայ. ի հարկէ թէ ֆէմիլիանի եւ թէ
կանանց իրաւունքների մասին երբեք
ականջի ծայրօջէ էլ չէ լսել: Պարզ
զեղջկուհի, բայց ես զուրա կարել
կը տամ որ ամբողջ Ռուսաստանում
նրանից աւելի հետեւողական եւ հա-
մոզված ֆեմիլիանս չէք կարող գտնել:
Գեղջկուհի ֆեմիլիանը բոլոր ին-
րերի մէջ, ինձ աւելի համակրութիւն
էր ցոյց տալիս. անշուշտ վաղ իշկա-
յի իմ մասին ունեցած փոփոխութիւն
եւ նրա միջոցով տաձս գրամի պատ
ճառով:
Ամենքի հետ լուրջ եւ լուռ, Արի-

քերու յատկացնել :
Տրուելիք ներկայացուցնելու մասնախումբը կընտրուի խումբէն, սա պարտաւոր է յետոյ հաշիւ տալ ԳՈՂ-ԹԱՆԻ վարչութեան, որը այդ հաւաքուած գումարը կը յատկացնէ որոշուած նպատակին :

Այժմ ԳՈՂԹԱՆ Երգեցիկ խումբը ի նպատակ վառնայի Սիսակեան վարժարանի աղքատ սաներու և սանուհիներու համար ներկայացուած մը պիտի տայ, զտակուայ հագուստ և կօշիկ գնելու անոնց :

Կը յուսանք որ վառնայի հայ հասարակութիւնը այս անգամ ալ չպիտի զլանայ իր փոքրիկ նուէրներով ուրախացնել աղքատիկ սաները եւ սանուհիները զատկուայ ուրախ օրերուն :

Վարչութիւն
ԳՈՂԹԱՆ Երգ. Խմբի
Վառնայի

Շուկայի Վեռնո Պուկարացիք ընթերցարանին մէջ կը ծախուի Հայ Յեղ. Դպրակցութեան բարձրագոյն դակ ոսկեգօծ գինանշանը գածէ խիստ շքեղ պատրաստուած 49—43 սն. մեծութեամբ, Արձանագործ Պ. Արքէն Փափագեանէ, որ գեղարուեստական գնահատելի գործ մըն է :

Կարճէ որ ամեն հայ ուրախակցական ընկեր ունենայ ան իր սենեակին մէջ :

Գինն է 10 Ֆրանք կանխիկ, դիմել Շուկայի Վեռնո Պուկարացիք ընթերցարանի վարչութեան :

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Մեր Մասնաճիւղներու և ընկերներու ըրած հարցին, հրապարակու կը պատասխանենք թէ, Մասնաճիւղիս հասցէն նոյնն է (Մ. Ն.) և «Երիտասարդ Հայաստան» ժառանգ Շարժումի թիւ 694ին մէջ եղած յայտարարութեան հասցէն ու Մ. Ն. կեղծ անունը Մասնաճիւղիս հետ ու է անշուխտ չունի. հետեւաբար Հնչակեան Մասնաճիւղերը կը զգուշացնենք որ այդ հասցէին ու է պաշտօնական թղթակցութիւն չի կատարեն :

Հնչ. Սօց. Յեղ. Կուսակցութեան
Ֆիլիպպի Մասնաճիւղի
Վարչութիւն
(Կնիք)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուկար իշխանութիւնները Քրիսթէնտիկի և Տուպնիցայի մօտեր 12 հոգի Մակեդոնացիներ ձերբակալուի են, որոնք պիտի անցնէին Մակեդոնիա հրոսախմբերուն հետ միանալու նպատակով : Այդ անձերը համաձայն պատերազմական և ներքին գործոց նախարարներու հրամանին աքսորված են երկրին ներքին նահանգները :

— Անցեալ օր կրկին թուրք փախստական զինուորներ բերուած է Սօֆիա : Թուրք զինուորներու շարունակական փախուստը զօրեղ տպաւորութիւն կը գործէ Սօֆիայի մէջ :

— Արտաքին գործոց նախարարի կարգադրութեամբ Վէշէր-

նա Բօշթա թերթի գլխաւոր խմբագիրը Շանկօֆ դատի ենթարկուած է Սուլթանի դէմ յարձակողական յօդուած գրելուն համար : Նախարարը այդ կարգադրութիւնը ըրած է Թուրքիոյ Գոմիսիոնի գիմուսին վրայ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը թէեւ չէ յաջողութեամբ փախած պալատական պաշտօնեաները եւրոպայէն ետ բերել, բայց և այնպէս հրամայած է որ անոնց թոշակները վճարուին, որովհետեւ կը վախնայ թէ իրեն գաղտնիքները գուր կուտան :

— Պոլսէն հայ եպիսկոպոս մը փախեր է, քաղաքականապէս կասկածուելուն համար, հետագորին մէջ եպիսկոպոսին անունը սխալ և անհասկանալի ըլլալուն չենք կրնար անունը հաղորդել :

— Կրէտէի խառնակութիւնները Սուլթանին մեծ անհանգստութիւն կը պատճառեն. կը վախնան որ անգլիացիները գրաւեն :

— Էտիրնէի մէջ թուրք և ֆրանսերէն թերթերու, որոնց մէջ մէջ Պուկարիոյ դէմ յօդուածներ կան, տարածուած արգելուած է կառավարութեան կողմէն :

— «Տրիբունա» թերթի թըղթակցին Հիլմի փաշան վախճայտներ է որ գարունը մակեդոնական խռովութիւնները կրնան կըրկնուիլ :

— Սուլթանական իրատեսով յունաց պատրիարքին դէմ ըմբոստացած ութ սինոտական եպիսկոպոսները պիտի երթան իրենց թեմերը որով և առ խնդիրը պիտի գոցուի :

ԱՆԳԼԻԱ

Անգլիացիք Կրէտական շարժման մեծ կարեւորութիւն չեն տար :

— Արտաքին գործոց նախարարը երեսփոխանական ժողովի մէջ յայտարարէր է որ իրապէս Մակեդոնական թուրքներու միջև ըլլան, և այժմ այդ խնդիրը այն պիտի ջնջուի մը մէջ մտած է, որ բոլոր մեծ պետութիւններն ալ իրաւունք ունին խառնուելու եւ գործը միայն երկու պետութեանց չի թողնելու :

Պուկարները և մակեդոնացիք շատ գոհ են նախարարի այս յայտարարութենէն :

ՌՈՒՍԻԱ

— Մարտ 19ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ հոն ձերբակալուած են քանի մը անիշխանականներ որոնք Զուրիցերէա-

յէն եկած էին քանի մը բարձրաստիճան անձեր սպաննելու ի թիւս որոց և վրատիմիր գուքը ու թրէքովը :

Թրէքովի վրայ արդէն փորձ եղած է բայց յաջողած չեն :

— Գրաքովի թերթերէն մին կը հաղորդէ որ ռուս կառավարութիւնը որոշած է Լեհաստանի սպաններէն 600 հոգի ուղարկել Սանչուրիա :

— Կառավարութիւնը Ֆինլանտիայէն փոխանակ զինուոր անուելու ընդհանուր ռուսական գործերուն ծառայեցնելու համար, Ֆինլանտիոյ առաջարկութեամբ համաձայնած է տարեկան տաս միլիոն մարք տուրք առնել :

— «Մաթէն» թերթի Բեթերսպուրկի թղթակցը կը հաղորդէ որ ռուս կառավարութիւնը ձաբոնի հետ մղած պատերազմին համար մինչեւ հիմա ծախսած է 5 միլիարդ 200000 Ֆրանք : Նոյն թղթակցը համոզուած է որ մինչեւ մայիս հաշտութիւն պիտի կայանայ :

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՅՐԱՆՍԱ

Անցեալ օրեր Պրանսական ծովային նախարար Իէլթան գրած էր հետեւեալ տողերը :

«Եթէ Ռուսիան իր ամենալուրջ քրքրէ զրկէ Մանչուրիա, այն ատեն պիտի զրկուի դաշնակցութեան պայմանագիրը գործադրելու կարելիութենէն. Այդ դաշնակցի միտք ունի և ֆրանսական մեծամասնութեան համակրութեան արժանացած է այն ենթադրութեամբ որ Ռուսիան բաւական ուժ ունի իր ձայնը եւ որոշումները Եւրոպայի մէջ յարգել տալու համար : Եւ որովհետեւ այս պարագաներու մէջ այդպէս չի կրնար ըլլալ, ուրեմն ռուսֆրանսական դաշնակցութիւնը այլ ևս միտք չունի :»

Իէլթանի այս տողերը «Նովոյե Վրէմիա» ռուս թերթին ստիպած են հետեւեալ խորհրդածութիւնը ընել :

Այսպէս ուրեմն Պրանսայի սիրուն համար, Ռուսիան պարտաւոր է իր ուժերը պահպանել և շահերը Մ. Արեւելքի մէջ մոռնալ. բայց միթէ ռուսֆրանսական դաշնակցութիւնը Ռուսիոյ վրայ միայն պարտականութիւններ կը դնէ, և իրաւունքները Պրանսային կուտայ :

ՌՈՒՍՈՒՆՔԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Փէնէրալ Լինէլիչ իր զօրքին շրջաբերական մը զրկեր է. որուն մէջ կըսէ թէ Ռուսիայէն օգնութիւն գալը կը շարունակուի, զօրաբանակները կարգի կը մըտ-

նան և ինք յոյսունի թէ զօրքերը պիտի կարենան ռուսական զօրքին յատուկ արժանիքը պահպանել :

— Ռուսական զօրագունք մը բարձրութիւն անհետացեր է, ուր ըլլալը չի գիտցուիր :

— Գուրգաթիւնի ասրեկան ռոճիկը որ 300000 ռուպլի էր գըլխաւոր հրամանատարութեան միջոցին, նոյնը մնացեր է և այժմ :

— Մեծ իշխան Նիքոլայը իր քննութեան արդիւնքը ներկայ զինուորական ուժի մասին գեւ տուած չէ :

— Փէնէրալ Խարքովիչ նշանակուած է սպայակոյտի պետ Լինէլիչ զօրաբանակին :

— Ռուսական թերթերու խորպիւնէն կը հաղորդեն որ Մարշալ Սեւաստոպոլսի յարձակում գործել և արդէն գըլխաւոր ուժերով 30 քիլմ. տարածութիւն հեռու վը գտնուի ռուսական գըլխաւոր դիրքերէն. Խոնխուկական հերոսախմբերը օր օրի վրայ կը շտանան :

— Ճարտանցիները գերբր են ինքուստրի շոգնաւը, որը յայտնի չէ թէ որ պետութեան կը պատկանի և հաւանական է թէ վրատիվութեամբ կերթար :

— Ռուսիոյ պատերազմական նախարար նշանակուել է ժէնէրալ Սուխամիլինով, որ Տրակովրովի աշակերտը և սիրելին է :

— Մարտ 20ին ռուսական թերթի մը կը հաղորդեն կուռլուինէն որ ճարտանական զօրագունք մը արդէն կիրիւնի բարձրութեանց վրայ կը գտնուի : Մանչուրիոյ մէջ եւրոպացիներու դէմ բորբոքում կը նկատուի :

— Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ զօրաշարժը կը շարունակուի. շուտով պատերազմի դաշտ պիտի զրկուին հետեւակ թիկնապահ զօրքերու երկրորդ զօրաբաժինը ինչպէս և թնդանօթաձիգները :

— Իտալական «Թրիպուս» թերթին Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ զօրաշարժը կանոնաւորապէս կը շարունակուի :

ՖԻԼԻՊԷԻ

Գրասիրաց Եղբայրութիւն
(Հաստատուած 1883ին)

Ընթերցարանը բաց է բոլոր գիշերները, կիրակի և չորեքշաբթի գիշերներէ զտա :

Կիրակի բաց է ամբողջ օրը, տօներուն կէս օրէն ետքը միայն : Մատենադարանէն գիրք կը տրուի կիրակի առաւօտները :

Հայ հեղինակներէ շնորհակալութեամբ կատարուին նուէրներ : Վարչութիւն

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна